

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ

ԳԻՒԻ ԴԵ ՄՈՊԱՍԱՆԻ

Ամբողջ Վեցէւ-լը-Ռետեյլ քաղաքը ներկայ էր Բաղրն-
Լերմենսէի թաղմանը և քաղաքային վարչութեան ներկայա-
ցուցչի արտասանած դամբանականի վերջին խօսքերը երկար
ժամանակ հնչում էին բոլորի ականջին. «մի օրինաւոր մարդ
և պակասեց աշխարհում»:

Այս, ամեն ինչ ակնյայտնի էր կացուցանում, որ նա օ-
քինաւոր մարդ էր՝ նորա ամբողջ կեանքը, խօսքերը, վայելուչ-
կազմուածքը, քայլուածքը, մինչև անգամ միրուք պահելու ձեռ
և գլխարկի տարազը. Նա երեք չէր ասի մի այնպիսի խօսք,
որ իւր մէջ խրատ չը պարունակէր, ողորմութիւն տալիս նա-
չէր մոռանում խորհուրդ և տալ:

Նա իւր մահից յետոյ թողեց երկու զաւակ. մի տղայ, որ
քաղաքային խորհրդի անդամ էր և մի աղջիկ, որ ամուսնա-
ցած էր Պուարէյ-լը-լա-Վուտ նօտարի հետ և քաղաքում վա-
յելում էր ընդհանուր յարգանք:

Որդիքը սաստիկ վշտացան հօր մահուան պատճառով, ո-
րովհետև շատ սիրում էին նրան: Թաղումից յետոյ երբ վերա-
գարձան հանգուցեալի առներ՝ որդին, աղջիկը և փեսան երեքը
միասին փակուեցին նորա մենարանում բանալու նորա կտակը,
որ, մարմինը հողին յանձնելուց յետոյ, պիտի բացուէր առանց
կողմանկի վկաների, ինչպէս ցոյց էր տալիս այդ ծրարի մա-
կագրութիւնը:

Պուարէյ-լը-լա-Վուտը ձեռքի սովորական շարժումով
բաց արաւ ծրարը և, ակնոցները դնելով, սկսեց կարդալ
միօրինակ ձայնով, որ կարծես նշանակուած էր բացառապէս
պայմանագրեր կարդալու համար:

—Զաւակներս, իմ թանկագին զաւակներս, ես գերեզմանի
մէջ հանգիստ չեմ գտնի, եթէ չը գրեմ այս խոստովանանքը.

ևթէ չը խոստովանեմ իմ ծանր յանցանքը, որի յիշողութիւնը
թունաւորել է իմ ամբողջ կեանքը:

Այս, ես յանցանք եմ գործել, մի զարհուրելի, կեղտոտ
յանցանք:

Ես 26 տարեկան էի և նոր էի եկել Պարիզ փաստաբա-
նութեամբ պարապելու: Ես պարում էի այնտեղ այնպէս, ինչ-
պէս ապրում են գաւառներից եկած այն բոլոր երիտասարդ-
ները, որոնք մեծ մայրաքաղաքում չեն ունենում ոչ ծանօթ,
ոչ բարեկամ և ոչ ազգական:

Այնտեղ ես մի սիրուհի դժուար: Շատերը այդ բանի վրայ
կը զարմանան: Բայց ես պատկանում էի այն մարդկանց թուկն,
որոնք չեն կարող միայնակ ապրել: Դատարկ բնակարանում
սարսափելի տիրութիւն է տիրում վրաս, մասնաւանդ երեկո-
ները: Այդպիսի ժամանակ ինձ թւում է թէ ամբողջ աշխարհում
միայնակ եմ, որ ամեն կողմից ինձ անորոշ, բայց զարհուրելի
վտանգներ են՝ սպառնում: և հարեանս, որ միայն մի պատնշշով
է ինձանից բաժանուած, թւում է ինձ նոյնքան հեռու, որքան
աստղերը երկնքում: Այդպիսի բոպէներում ինձ տիրում է եր-
կիւղի սարսուը, և պատերի լուութիւնը սարսափ է բերում
վրաս: Ինչպէս տիրուր է սենեակի անդորրութիւնը, որի մէջ
մենակ ես ապրում: Նա յափշտակում է ոչ միայն մարմինդ,
առ և հոգիդ, և ամենաչնչին շշուկը տան մէջ, յատակի կամ
կահ-կարասիքի ճռնչիւնը ստիպում է մեզ ցնցուել, որովհետեւ
մենք մոայլ բնակարանում ոչ մի աղմուկի չենք սպասում:
Թանի-քանի անգամ ճնշող լուութիւնից կատաղութեան հասած
ես սկսել եմ ինձ ու ինձ խօսել, արտասանել եմ անկապ և
անմիտ խօսքեր, միայն նրա համար, որ խանգարեմ լուութիւ-
նը: Բայց այն ժամանակն էլ իմ սեփական ձայնը ինձ օտար
էր երկում և վախեցնում էր ինձ: Եւ իսկապէս ինչ կայ աւե-
լի զարհուրելի, քան դատարկ տան մէջ ինքն իրեն հետ խօսե-
լը: Լսում ես մի օտար, անծանօթ ձայն, որ արտասանում է
բառեր, առանց շարժառիթի որևէ մէկի կողմից, բառեր, ո-
րոնք ոչոքի չեն ուղղուած, դատարկ տարածութեան մէջ, որ-
տեղ չկայ ականջ, որ լսէր այդ խօսքերը և որտեղ նոքա այն-
պէս խուլ են հնչուում, ինչպէս մի արձագանք, մեր սեփական
մտքերի օտարոտի արձագանք:

Իմ սիրուհին մի ջահիլ աղջիկ էր, մէկը այն աղջիկնե-
րից, որոնք ապրում են այնպիսի արհեստով, որ ոչ մի պատ-
հովութիւն չի տալիս իրանց: Դա մի հեղանամբոյր, բարի ա-

բարած էր: Նորա ծնողները ապրում էին Պուասիում, և նա երբեմն գնում էր նոցա մօտ մի քանի օրով:

Մօտ մի տարի ես ապրեցի նորա հետ շատ հանգիստ. և վճռել էի այդ կապը խզել, հէնց որ պատահէի մի այնպիսի աղջկայ, որը ինձ դուք գար և վճռէի ամուսնանալ հետու: Ես ստածում էի իմ բաժանուելուց յետոյ իմ կենակցիս նշանակել մի փոքրիկ կենսաթոշակ, որովհետև մեծ հասարակութեան մէջ ընդունուած է աղքատ կանանց սէրը վարձատրել փողով, իսկ հարուատներինը՝ ընծաներով: Բայց մի անգամ նա ինձ յայտնեց, որ ինքը յդի է: Այդ լուրը ինձ կարծես շանթահար արաւ: Իմ դրութիւնս սարսափելի կերպարանքով մի վայրկեանում պատկերացաւ աշքիս: Ահա ուրեմն այն շղթան, որը վիճակուած է քաշ տալ մինչև մահ, շղթայ երեխայի կերպարանքով, որին հարկաւոր է դաստիարակել, պահպանել, ճանապարհի վրայ դնել, անյալու մնալով նրանից և նորան թազցնելով աշխարհից: Այն, այդ լուրը խորապէս ցնցեց ինձ և իմ հոգու մէջ յղացաւ մի աղօտ ցանկութիւն, որ ես ինքս դեռ չէի կարողանում որոշ կերպով ձևակերպել: Երանի թէ մի անակնկալ դիպուած աղատէր ինձ: Քանի քանի այդպիսի փոքրիկ էակներ դեռ չը ծընուած մեռնում են:

Ո՞հ, ես չէի ցանկանում իմ ընկերունու մահը: Ես սիրում էի այդ խեղան աղջկան: Բայց ես անգիտակցաբար ցանկանում էի այն երեխայի մահը, որ ինձ վախցնում էր:

Եւ նա ծնուեց: Եւ ահա մի ամուրի մարդու անձուկ բնակարանում նոր ընտանիք՝ ապօրինի ընտանիք, ապօրինի զաւակ: Նա էլ այնպէս էր, ինչպէս լինում են շատ երեխաներ և ես նորան չէի սիրում: Հայրերը, եթէ կուզէք իմանալ, կապւում են երեխաների հետ աստիճանաբար միայն: Նոքաչունին մայրերի բնազդական ըուռն սէրը դէպի երեխաները, նոցա զգացմունքը զարգանում է սակաւ առ սակաւ՝ որքան ամրանում են հոգեկան կապերը, որոնք միացնում են կենակցող էակներին, այնքան աւելի զարգանում է այդ զգացմունքը:

Անցաւ էլի մի տարի: Ես խուսափում էի անձուկ բնակարանից, ուր ամեն կողմ թափթփած էր սպիտակեղէն, խանձարուր, մանրիկ գուլպաներ, զանազան անկիւններում, բաղկաթուների վրայ քարշ արած հազար ու մի տեսակ բնաեր: Ես փախչում էի այստեղից, որպէս զի երեխայի ձայնը չլսեմ, որ ամենաշնչին պատճառով ճշում էր. երբ լողացնում էին նորան, պատկեցնում էին կամ վերցնում—նա անդադար գոռում էր:

Ես մի քանի ծանօթներ էի գտել և մի անգամ մի հասարակութեան մէջ պատահեցի նորան, որը յետոյ դարձաւ ձեր մայրը: Ես ջերմագին սիրեցի նորան, սկսեցի հետամուտ լինել առաջարկութիւն արի և նա ընդունեց:

Բայց իմ ձեռքն ու ոտքը կապած էին: Ունենալ երեխայ և պսակուել մի աղջկայ հետ, որին պաշտում ես, թէ խոստովանուել բոլորը, հրաժարուել նորանից, ամբողջ կեանքի երջանկութիւնից, ամեն բանից: Նորա ծնողները խստաբարոյ յարդիկ էին և չէին տալ նորան ինձ, եթէ ամեն բան իմանային:

Ես մի ամբողջ ամիս բարոյական տանջանքներ էի կրում: Ինձ մաշում էին հազար ու սի տեսակ մտատանջութիւններ. և ես զգում էի, թէ ինչպէս աճում, մեծանում էր սրտում ատելութիւնը դէպի երեխան, դէպի այն կենդանի փոքրիկ մսի կոյտը, որ ընկած էր իմ ճանապարհիս վրայ, խորտակում էր կեանքս, որ դատապարտում էր ինձ մի ողորմելի կեցութեան, զուրկ այն անորոշ յօյսերից, որոնք երիտասարդութեանը մի առանձին գեղեցկութիւն են տալիս:

Մի անգամ ընկերունուս մայրը հիւանդացաւ: Եւ ես մնացի մենակ երեխայիս հետ: Դեկտեմբեր ամիսն էր: Սարսափելի սառնամանիք էր դուրսը: Ո՞հ, այդ ինչ գիշեր էր: Ընկերունիս հէնց նոր էր գնացել: Միայնակ ընթրեցի փոքրիկ սեղանատանը և ոտիս մատերի վրայ մտայ երեխայի սենեակը:

Ես նստեցի վառ բուխարու առաջ դրած բազկաթոռի մէջ: Սաստիկ, սառը սուր քամին հեծում, խփում էր պատուհաններին և ասաղերը փալփլում էին մի այնպիսի առանձին փայլով, որպիսին լինում է միայն սառնամանիքի ժամանակ:

Եւ աղօտ, յանցաւոր ցանկութիւնը, որ ինձ ամբողջ առանգիստ չէր տալիս, նորից զարթեց իմ հոգում: Նա միշտ առանձնացած ժամերին տիրում էր ինձ, չարչարում, տանջում, ինչպէս անխոյս մտքերը տանջում են հիւանդ ուղեղը, ինչպէս վէրքը ուտում է մարմինը: Նա պաշարում էր իմ գլուխը, սիրտը, ամբողջ մարմինս, ինչպէս գազան կլանում ինձ: Ես փորձում էի հեռացնել այդ ցանկութիւնը, մաքառել նրա հետ, մաքրել հոգիս ուրիշ տպաւորութիւններով, նորյոյսերով, ինչպէս որ բաց են անում պատուհանը, որպէս զի առաւտեան թարս օդը դուրս մղէ սենեակի փչացած մթնութրդը: Բայց ես մի ըոպէ չէի կարողանում բաժանուել այդ մտքից: Զգիտեմ, ինչպէս արտայայտեմ այդ տանջանքը: Նա գազանի նման յօշուում էր սիրտս, և ես զգում էի նորա ա-

տամների շփումը, որ սարսափելի ֆիզիքական ցաւ էր առաջաց-
նում սրտիս մէջ:

Այն, իմ կեանքը վերջացաւ. դրութիւնս անելանելի էր,
Բայց ինչպէս հրաժարուէի հարսնացուիցս: Զէ՞ որ ես խնճի
նման սիրում էի ձեր ապագայ մօրը, և անդիմադրելի արգել-
քը աւելի բորբոքում էր այդ կիրքը:

Զարհուրելի չարութիւն առաջացաւ իմ մէջ և սղմելով
կոկորդս՝ խելագար դարձրեց ինձ: Այդ գիշեր ես խելագա-
ըուած էի...

Երեխան քնած էր: Ես վեր կացայ և նայեցի նորան. այս,
այդ ծնունդը, այդ չնշին ճիճուն դատապարտում էր ինձ յա-
ւիտենական տանջանքի:

Նա քնած էր վերմակում փաթաթուած՝ բերանը բաց՝ օ-
րօրոցում, որը կպած էր անկողնիս, ուր ես անց էի կացրել
անքում գիշերներ:

Ա՛յս, ինչպէս ես կարողացայ անել այդ բանը, ինչ ոյժ
էր ինձ դրդում ու ինչ չար ոգի էր տիրապետել ինձ: Փորձու-
թիւնը վրայ հասաւ այնպէս յանկարծ, որ ես չկարողացայ եր-
կար մտածել: Ցիցում եմ միայն, որ սիրուս սաստիկ բարախում
էր, որ լսում էի նորա խուլ զարկերը, նման մուրճի խուլ
զարկերին, որոնք լսում են պատի յետեմից: Միայն սրտի այդ
զարկերը մնացին յիշողութեանս մէջ:

Իմ մտքերը խառնուած էին, աներևակայելի քաօս էր
գլխիս մէջ, ես գտնաւում էի այնպիսի դրութեան՝ մէջ, երբ մարդ
ձնշող մտքերի ազդեցութեան տակ կորցնում է նաև իւր կամքը
կառավարելու ընդունակութիւնը:

Ես զգուշութեամբ բաց արի այն վերմակը, որի մէջ փա-
թաթուած էր երեխան, և նա մնաց բոլորովին մերկ: Նա չզարթ-
նեց: Ցետոյ ես մօտեցայ պատուհանին և բոլորովին բաց արի:

Սառը օդի հոսանքը ներս մտաւ սենեակը այնպէս ուժ-
գին, որ ես յետ դարձայ և երկու մոմերի բոցը դողդողաց:

Ես մնացի պատուհանի մօտ և չհամարձակուեցի շուռ տալ
գլուխս, որպէս զի տեսնեմ թէ ինչ է կատարւում իմ ետև. ճա-
կատիս, երեսիս, ձեռքերիս վրայ ես զգում էի սենեակը թափան-
ցող սառը օդի շփումը:

Շատ երկար տեսեց այդ:

Ես ոչ մի բանի մասին չէի մտածում. ոչինչ չէի գիտակ-
ցում. վերջապէս մանուկի թոյլ հազը ցնցեց ինձ: Դեռ հիմա էլ
ամեն անգամ ցնցում եմ, երբ մտարերում եմ այդ: Ուշքս

Կորցրած՝ արագութեամբ փակեցի պատուհանի երկու փեղկերն էլ և վրայ պրծաւ երեխային:

Նա դեռ քնած էր, մերկ, բերանը բաց, Նորա ոտները սառն էին, ինչպէս սառոյց, և ես շատպեցի փաթաթել վերմակի մէջ: Այդ ժամանակ իմ սիրտը փափկացաւ և ես սաստիկ խղճացի այդ անմեղ մանկան, որին ուզում էի սպանել: Երկար համբուրեցի նորա քնքոյշ մազերը և յետոյ նորից նստեցի բուխարու առաջ: Զարհուրում էի, երբ մտածում էի արածիս վերայ: Ինքս ինձ հարց էի տալիս, մրտեղից են երեան գալիս այդ հոգեկան մրրիկները, որոնք պղտորում են մարդոց բոլոր դիտակցութիւնը, ինքնիշխանութիւնը, որոնք պղտորում են մարդու միտքը, և նաև չէ համկանում՝ թէ ինչ է անում, և ինչպէս նաւը փոթորկի ժամին՝ չէ տեսնում, թէ ուր է գնում:

Երեխան կըկին հաղաց: Այդ հազը կրծում էր սիրտս: Ի՞նչ կլինի, սթէ մեռնի: Տէր Աստուած, ինչ պիտի անեմ ես այն ժամանակ: Ճրագը ձեռքիս մօտեցայ օրօրոցին և նայեցի երեխային. նորա հանգիստ շնչառութիւնը հանգստացրեց ինձ: Բայց նա դարձեալ սկսեց հաղալ: Ես զարհուրելով ետ քաշուեցի: Լարծես մի սարսափելի տեսիլ ինձ ետ մղեց: Ճրագը ձեռքից վայր ընկաւ:

Մթափուելով բարձրացրի մոմը և զգացի երեսիս վրայ սառը քրտինք, այն տանջող սառը քրտինքը, որ յաջորդում է ուժգին հոգեկան ցնցումներին, ցնցումներ, որոնք այրում են ինչպէս կրակ, և սաոցնում ինչպէս սառոյց: Կարծես այդ անսասելի հոգեկան տանջանքները կաթիլ-կաթիլ ծորում են գանգի ոսկրի միջից:

Մինչև առաւօտ ես խոնարհած կանգնած էի որդուս անկողնի մօտ. հանգստանում էի երբ նա հանդարտ էր, և յուսահատում: Երբ մէսում էր հաղալ:

Նա արթնացաւ՝ աչքերը կարմրած, ձայնը կտրուած և երեսը ուռած:

Երբ մեր աղախինն եկաւ, իսկոյն նորան ուղարկեցի բըժըշկի ետեից:

Նա մի ժամից յետոյ եկաւ, տեսաւ երեխային ու ասաց.

— Զէք մըսացրել արդեօք սորան:

Ես զառամեալ ծերունու նման դողդողացի ու մըմնջացի.

— Ո՞չ, չեմ կարծում:

Ետոյ հարցուի երկիւղով.

— Հիւանդութիւնն ինչ է. վտանգաւոր հօ չէ:

—Դեռ ոչինչ որոշ չեմ կարող ասել. այսօր երեկոյեան դարձեալ կը մտնեմ:

Եւ իրաւ, երեկոյեան նա եկաւ Համարեա ամբողջ օրը երեխան ինքնամոռացութեան մէջ էր զտնւում, և ժամանակ առ ժամանակ հազում էր:

Գիշերը երեաց թռերի բորբոքում:

Հիւանդութիւնը տևեց 10 օր: Ես չեմ կարող արտայայ- տել այն, ինչ որ կրեցի այդ անվերջ երկար ժամերում:

Նա մեռաւ...

Եւ այդ բոպէից... այդ բոպէից ես հանգատութիւն չու- նէի. մի ժամ չէր անցնում, որ զարհուրելի յիշողութիւնը չը տանջէր իմ ուղեղը, չըրծէր իմ սիրաց:

Ո՛հ, երանի թէ ես կարողանայի խելագարուել:

Պուարեյլ-դը-լա-վուտը իւր սովորական ձեռվ յետ տա- րաւ ակնոցները:

Ժառանգները գունատուած, անշարժ լուռ նայեցին մի- մեանց:

Վերջապէս նօտարն ասաց.

— Այս թուղթը պէտք է ոչնչացնել:

Հանգուցեալի աղջիկն ու տղան գլխով համաձայնութեան նշան տուին: Եւ նօտարը ճրագը վառեց, այն թերթերը, որոնց վերայ գրած էր հանգուցեալի խոստովանքը, զգուշութեամբ ըաժմանեց կտակի միւս թերթերից և մօտեցնելսվ բոցին, ձգեց բուխարու մէջ:

Եւ երեքը միասին հետևում էին, թէ ինչպէս անհետանում էին սպիտակ թերթերն ու դառնում սկ մոխրի կոյտ: Բայց նկատելով որ նրանց մէջ երեսում են էլի մի քանի տառեր, հանգուցեալի աղջիկը կօշկի ծայրով տրորեց այրուած թղթի մնացորդը և խառնեց բուխարու մոխրի հետ:

Ցետոյ երեքը միասին կանգնած դեռ նայում էին հանգ- չող բուխարու վրայ, կարծես երկիւղ կրելով թէ մի գուցէ այ- րուած զաղանիքը դուրս թռչի բուխարու միջից:

Թարգմ. ՊՕՂ. ԶԱՐԱՐԵԱՆ